

Նրանից և մօտենալով դալլալին յայտնեցի նրան, թէ ես ինչ էի ուզում: Մենք երկուսով քաշուեցինք մի անկիւն, որտեղ նա ցած դրեց իր ուսի շորերը և խնդրեց ինձանից ընտրել ուզեցածս:

Ամենից առաջ ես վերցրի մի գեղեցիկ մետաքսէ բաճկոնակ, որ զարդարուած էր ոսկէ ժապաւէնով և կոճակներով: — Քանի՞ է սրա գինը, հարցրի ես:

— Օ՛, դա շատ պատուական բան է, պատասխանեց դալլալը. երևի դու լաւ ճաշակի տէր մարդ ես որ հաւանում ես սրան: Երդուում եմ որ սա պատկանում էր Շահի սիրական վրացուհիներին մէկին որ միայն մի-երկու անգամ է հագել:

Նա հագցրեց ինձ այդ բաճկոնակը և ման գալով իմ շուրջը, ասաց.

— Մաշալլա՛հ, մաշալլա՛հ, շատ լաւ է սագում քեզ. կարծես թէ հէնց քո համար են կարել: Ծղմարիտ եմ ասում, որ բացի քեզանից, ուրիշ ոչ ոք արժանի չէ այսպիսի բան հագնելու:

Այս խօսքերն այնքան հաճոյացրին ինձ, որ ես մտածեցի մի շալ էլ գնել մէջքիս համար:

— Մի հատ էլ լաւ շալ եմ ուզում, ունի՞ս, հարցրի ես:

— Ինչո՞ւ չէ, պատասխանեց նա, և ցոյց տուեց մի հատ ծակծակուած և մի քանի տեղ էլ կարկատուած քաշմիրի շալ:

— Տեսնեմ այդ շալը, ասացի ես:

— Տեսէք, սա պատկանում էր Շահի կանանց մէկին: Եթէ ուզում էք գնել, ես մատչելի գնով կը տամ ձեզ:

Շալը այնպէս ոլորեցի որ նրա ծակծակուած տեղերը չբռնային, և փաթաթեցի մէջքիս շուրջը: Ինձ հարկաւոր էր ունենալ մի հատ դաշոյն ևս: Դալլալը մի հատ դաշոյն տուեց, և երբ ես նրան անցկացրի. գօտուա մէջ, նա մի-երկու անգամ շուրջս ման եկաւ և հիացմամբ ասաց.

— Մաշալլա՛հ, մաշալլա՛հ, քեզանից աւելի գեղեցիկ, փայելչակազմ և աւելի լաւ հագնուած մարդ ամբողջ Թէհրանում չկայ:

Երբ նստանք մեր հաշիւներն անելու, դալլալն ասաց.

— Դուք չգիտէք թէ ես ինչքան հաւատարիմ ու ճշմարտախօս եմ առևտրի մէջ: Ես այն դալլալներից չեմ որ հարիւր ասեմ՝ բայց յիսո՞ւն ստանամ: Հաւատացէք ինձ որ ես ինչ ասում եմ՝ ճշմարիտն է: Դուք տուէք ինձ 5 թուման բաճկոնակի համար, 15 թուման՝ շալի համար և չորս թուման՝ դաշոյնի համար: Այս գները սարսափեցրին ինձ, որովհետեւ ես միայն 20 թուման ունէի, մինչդեռ նրանք բոլորը միասին, 24

Թուման էին անում: Յուսահատուելով, սկսեցի բաճկոնակն հանել, բայց դալլալը ձեռքս բռնելով արգելեց և ասաց.

— Գուցէ դուք կարծում էք որ իմ ասած գները շատ բարձր են. բայց երդում եմ ձեր գլխով և իմ հոգով, որ ես ինքս հէնց այդ գներով եմ ձեռք բերել դրանց: Հիմայ Թողնում եմ ձեր բարի կամքին, դուք լինջքան էք հաճում շնորհել:

— Դու այնքան մի բարձր գին ես նշանակել, պատասխանեցի ես, որ ես չգիտեմ ինչ ասել, սակայն եթէ բոլորը միասին 5 թումանով կտաս՝ ես կը գնեմ:

Դալլալը արհամարհանքով մերժեց իմ առաջարկածը, և ես պարտաւորուեցի յետ տալ իր ապրանքը: Նա ծալեց նւրանց և ուսի վրայ ձգելով՝ ասաց.

— Դիտէ՛ք ինչ է, ես նայում եմ ձեր վրայ իբրեւ մի բարեկամի և ես պատրաստ եմ անելու ձեզ համար այն՝ ինչ որ ես չեմ անիլ իմ եղբօր համար: Ուրեմն եթէ դուք ուզում էք բաճկոնակը, շալն և դաշոյնը, ես 10 թումանով կը տամ ձեզ:

— Ո՛չ, ասացի ես, 10 թումանով չեմ վերցնիլ, եթէ կ'ուզես՝ 6 թուման կը տամ, և մէկ թուման էլ աւելորդ կը տամ իբրեւ ընծայ:

— Նա իսկոյն համաձայնեց, ինձ տուեց գնածս բաները, ստացաւ փողը և հեռացաւ ուրախ սրտով:

Վերցնելով գնածս բաները, մտածեցի ուղղակի բաղնիք գնալ: Բազարով անցնելիս, գնեցի մի զոյգ բարձրակրունկ մաշիկ, մի հատ մետաքսէ կապոյտ թաշկինակ, մի զոյգ ծիրանագոյն մետաքսէ վարտիք, և այդ բոլորը կապելով իմ թաշկինակի մէջ՝ քայլեցի դէպի բաղնիք:

Հասայ բաղնիքի դուռը, ներս մտայ, բայց իմ արտաքինն այնքան աննշան էր, որ ոչ ոք ուշադրութիւն չդարձրեց ինձ վրայ: Մի անկիւնում ես վայր դրի իմ կապոյցը, շորերս հանեցի և մի մեծ դնշակով ծածկելով կէս մարմինս, մտայ բաղնիքի ներսի բաժինը: Այստեղ ամեն դասակարգի մարդիկ էլ հաւասար էին, գոնէ իրանց արտաքինով, և ես ուրախացայ որ իմ գեղեցիկ կազմը, լայն կուրծքս և նեղ մէջքս բոլորի ուշադրութիւնն էլ պիտի գրաւէր:

Կանչելով դալլաքին, պատուիրեցի նրան լուրջ ուշադրութիւն դարձնել իմ մարմնի վրայ, այսինքն՝ մարմինս լաւ շփել ձեռքով, մաղէ ձեռնոցով կեղտը մաքրել, սափրել գլուխս ու երեսս, ներկել մօրուքս, բեխերս, գանգուրներս, ձեռքերս ու ոտներին տակերը, նաև պատրաստել մի քիչ բաղադրութիւն...

Դաւլաքն անմիջապէս սկսեց իր գործողութիւնը, և մի-եր-
ջու րոպէ մարմինն շփելուց յետոյ՝ նա ասաց.

—Ի՞նչ լայն կուրծք ունէք, մաշաւլա՛հ, մաշաւլա՛հ. այս-
պէս լայն կուրծք շատ քիչ եմ տեսել, մաշաւլա՛հ:

Դաւլաքի այս խօսքերի վրայ ես ինձ այնպէս ձևացրի,
որ թէ այդպիսի դովասանական բառերը առաջին անգամ
չէր որ ես լսում էի, թէ և միեւնոյն ժամանակ մտածում էի թէ
ինչքան պիտի փքուեմ ու հպարտանամ, երբ նոր շորերս
հագնեմ: Մի խօսքով թագաւորութիւն էր անցնում մեր-
քիցս:

Դաւլաքը վերջացնելով իր գործը, թողեց ինձ հանգստա-
նալ, և մի քանի րոպէից յետոյ, իմ մարմինը ծածկելով մի մեծ
սաւանով՝ առաջնորդեց ինձ դէպի այն անկիւնը, որտեղ ես հա-
նել էի շորերս: Օ՛հ, ի՞նչ մեծ հաճոյքով ես բաց արի իմ կապոցը
և նայեցի իմ սիրուն շորերին: Կեանքուս դեռ մետաքսէ շո-
րեր չէի հագել: Ամենից առաջ հագայ վարտիքս, յետոյ շա-
պիկս ու նրա վրայ՝ բաճկոնակս, որի խշխշոցն այնքան դուր
եկաւ ինձ, որ ես շուրջն նայեցի տեսնելու թէ արդե՞ծք մարդիկ
նայում են ինձ, թէ չէ: Յետոյ շալը կապեցի մէջքիս ամենա-
նոր մոդայով, այսինքն՝ առջևիս մասը աւելի նեղ քան ետեւինս,
և երբ դաշոյնիս կոթն էլ սկսեց փայլել իմ գօտու միջից, ու-
րախութիւնիցս էլ ոտի վրայ չէի կարողանում կանգնել: Գըլ-
խարկիս ծայրին ես այնպէս մի ձև տուի, ինչպէս անում են
պետական մարդիկը, և դրի գլխիս բաւական թեք դէպի մէկ
կողմը:

Երբ բաղնիսպանը դէմ բռնեց ինձ իր հայելին, որ նշան
էր փող ստանալու, ես կամաւ ուշացրի նրան որպէսզի ինձ լաւ
զննէի հայելու մէջ: Ուրեկով ու սրելով բեխերիս ծայրերը դէ-
պի աչքերս, ետ տուի հայելին և առատօրէն վարձատրեցի բաղ-
նիսպանին: Հին շորերս էլ նրա մօտ աւանդ թողնելով՝ դուրս
եկայ բաղնիքից և սիգաճեմ քայլերով սկսեցի ման գալ, կար-
ծեա թէ ես մի մեծ մարդ էի դարձել:

ԳԼ. ԺԲ.

Ասքէր բանաստեղծի վերադարձը: Նրա վերադարձը ինչ հետևանք ունեցաւ
Հաջի Բաբայի համար:

Քայլերս ուղղեցի դէպի Ասքէր բանաստեղծի տունը, յու-
սալով մի լուր իմանալ նրա մասին: Մի խումբ մարդիկ

կանգնած էին նրա տան առաջ։ Շուտով ինձ յայտնուեց որ բանաստեղծը հէնց նոր հասել էր և կտրի վրայով մտել էր տուն *):

Ես իսկոյն մտայ նրա տունը և գտնելով նրան մի սենեակում նստած՝ ուրախական ողջունով շնորհաւորեցի նրան իր ազատման և անվտանգ վերադարձի առթիւ։ Նա չճանաչեց ինձ, նա չէր կարողանում համոզել ինքն իրան, որ իր առջև կանգնած, կոկուած ու զարդարուած անձնաւորութիւնը կարող էր իր տեսած կեղտոտ, շորերը քրքրուած, սրիկայ Հաջի Բաբան լինել։

Սենեակում կային ամեն դասակարգի մարդիկ, որոնց մի քանիսի երեսներն ուրախութիւն էին արտայայտում, և միւսներինը յուսահատութիւն։ Վերջինների մէջ էր Միրզա Ֆուզուլը որ ամենից աւելի մեծ յարգանքով էր վերաբերում դէպի բանաստեղծը, և որն անդադար բացազանչում էր. «Շատ երկար ժամանակ տեղդ դատարկ էր մնացել. բայց այժմ բոլորիս աչքները լոյս, որ անվտանգ վերադարձել ես»։

Յանկարծ լուր ստացուեց, որ Շահը ցանկանում է անմիջապէս տեսնել բանաստեղծին։ Նա իսկոյն կանգնեց և իր ճանապարհորդական փոշաթաթախ զգեստով, որ դեռ հագին էր, գնաց պալատը։

Այցելուների խումը ցրուեց։ Ես մտածեցի կրկին տեսնուել բանաստեղծի հետ։ Բակիցը դուրս գնալու ժամանակ՝ ես հանդիպեցի նազիրին որի մասին ես արդէն խօսել եմ։ Նա էլ էր խիստ տխուր երևում։

— Յանուն Ալլահի, ասացի ես, տեսմը որ իմ խօսքերը ճշմարիտ էին. տեսմը որ խանը իրօք կենդանի էր։

— Այո, ճշտարիտ էին խօսքերդ, ասաց նա խոր հոգոց հանելով։ Նա կենդանի է. տայ Ալլահն որ նա երկար ապրի. բայց... բայց... Է, Ալլահն ողորմած է։

Նազիրն անցաւ գնաց։

Այդ օրն ես անցկացրի այստեղ ու այնտեղ շրջելով, և ամբողջ ժամանակ պալատներ կառուցանելով օդի մէջ։ Ես անցայ բազարների միջով, մտայ այս ու այս մէսչիդը, և մի քանի ժամ անցկացրի այն բախտախնդիրների հետ, որոնք խումը-խումը միշտ հաւաքուած են լինում մէսչիդների դռների առջև։

*) Պարսիկների մէջ սովորութիւն կայ որ երբ մի մեռած համարուած մարդ վերադառնում է տուն, նա պարտաւոր է կտրի վրայով մտնել դռները և փոխարէն տան դնելով։

Բազարներում և մէսչիդներում օրուայ լուրը Ասքէր բանաստեղծի մասին էր: Ուսանք ասում էին որ իբր թէ Շահը չէր հաւատացել որ Ասքէր խանը կենդանի է և վերադարձել: Ուրիշներն ասում էին որ նրա վերադարձը շատ ուրախութեան պատճառ է դարձել Շահին, որը հրամայել է 10 թուման տալ այն մարդուն, որ նրա ողջութեան աւետիսը բերել է Թէհրան:

Սակայն ճշմարտութիւնն այս էր. Շահը յուսահատուել էր երբ լսել էր որ Ասքէրը յարութիւն է առել, որովհետեւ նրա կենդանութիւնը խափանել էր այն որոշումները, որ նա արել էր նրա տան ու ստացուածքի վերաբերմամբ: Բայց Ասքէրը, որ լաւ ծանօթ էր Շահի բնաւորութեանը և գիտէր թէ նա ինչքան է սիրում բանաստեղծական գրուածքները, մասնաւորապէս այն բանաստեղծութիւնները, որոնց մէջ ինքը գովաբանուում ու փառաբանուում է, ճանապարհին պատրաստել էր մի ոտանաւոր, որ երբ նրա մօտ կարդացուեց, այնպէս հաճոյացրեց նրան, որ նա հրամայեց նրա բերանը ոսկով լցնել, և վերահաստատեց նրան իր պաշտօնի վրայ:

Այս հանգամանքից օգտուելով, ես իսկոյն գնացի բանաստեղծի տունը և շնորհաւորեցի նրան իր բարեբախտութեան առթիւ: Դրանից յետոյ ես ամեն առաւօտ այցելում էի նրան, նա էլ միշտ ուրախութեամբ էր ընդունում իմ այցելութիւնները: Տեսնելով որ նա համակրանքով է վերաբերում դէպի ինձ, ես մի առաւօտ խնդրեցի նրանից մի պաշտօն յանձնել ինձ իր տան մէջ կամ յանձնարարել ինձ իր բարեկամներից կամ ծանօթներից մէկին:

Ես շուտով իմացայ թէ նազիրն ինչու էր տխուր և յուսահատ իր աղայի վերադարձի վրայ: Նա խարդախութիւններ էր արել նրա ստացուածքի վերաբերմամբ և վախենում էր խայտառակուելուց: Ես վստահ էի որ նա շուտով պաշտօնանկ պիտի լինէր, հետևապէս աշխատում էի այնպիսի եռանդ ու գործունէութիւն ցոյց տալ, որպէսզի նրա պաշտօնանկ լինելուց յետոյ բանաստեղծն ինձ նրա տեղը կարգէր: Անցաւ մի քանի օր, սակայն ինձ չյաջողուեց նպատակիս հասնել: Նազիրը մնաց իր պաշտօնի վրայ, և ես մնացի անգործ:

Մի առաւօտ, վերջապէս, Ասքէր խանն ինձ իր մօտ կանչելով, ասաց.

— Հաջի, բարեկամս, դու գիտես որ ես քեզանից միշտ գոհ եմ եղել, այո՛, գոհ եմ եղել այն բարեսրտութեան համար որ դու ինձ ցոյց տուիր երբ մենք երկուսս էլ թիւրքմէնների գերին էինք: Այժմ ես ուզում եմ ապացուցանել իմ երախտագիտութիւնը: Ես քեզ շատ լաւ նկարագրով յանձնարարել եմ

Միրզա Ահմադին որ Շահի հաքիմ բաշին (բժշկապետ) է: Վըստահ եմ որ քո ծառայութիւնը գոհացուցիչ կը լինի. նա քեզ կը սովորեցնի իր արհեստը, որովհետեւ միջոց կ'ունենաս կեանքի մէջ յառաջադիմելու: Վերջապէս դու գնահատում եւ յայտնիր նրան, որ ես եմ ուղարկել քեզ. նա քեզ իսկոյն մի պաշտօն կը յանձնի:

Միւս առաւօտն ես գնացի հաքիմ բաշու տունը, որ գտնուում էր Շահի պալատի մօտերքում: Տան բակում կային մի խումբ հիւանդներ, որոնց մի քանիսը կուշ եկած պատի տակում, մի քանիսը թեք ընկած գետնի վրայ եւ մի քանիսն էլ դեղի շիշերը իրանց ձեռքում սպասում էին հաքիմ բաշուն: Մի քանի բուլէից յետոյ նա դուրս եկաւ կանանոցից եւ մտաւ իր բժշկասենեակը: Նա մի ծեր մարդ էր, փոս ընկած աչքերով, ցանցաւ մօրուքով եւ կըմախքացած երեսով: Նրա մէջքը կորացած էր, եւ իր նստելու սովորական դիրքը խիստ տարօրինակ էր. նստած ժամանակ նրա գլուխը թաղում էր ուսերի մէջ, կզակը ցցւում էր դուրս, եւ ձեռքերը գտնուում էին գետնի վրայ, կզակը հարկում էին կազմում:

Նրա հարցերը շատ համառօտ էին լինում: Պատասխան լսելու ժամանակ շարունակ հ'ըմ... հ'ըմ էր անում, եւ կարծես թէ ամեն բանի վրայ մտածում էր, բացի իր առջեւ կանգնած հիւանդի վրայ: Մի քանի հիւանդներ տեսնելուց յետոյ նա իր աչքերը դարձրեց ինձ վրայ: Մօտենալով նրան՝ ես յայտնեցի իմ հոգի լինելը: Մի-երկու բուլէ նա իր սուր աչքերով գննեց ինձ եւ հրամայեց քիչ սպասել, որովհետեւ, ինչպէս երևում էր, նա ցանկանում էր առանձնապէս խօսել հետս:

Մի քանի բուլէից յետոյ նա դուրս գնաց սենեակից եւ ինձ հրամայեց հետեւել իրան: Նա մտաւ մի առանձին բակ որ պատկերով շրջապատուած էր ամեն կողմից, բացի այն կողմից՝ որի դիմացումն էր յՄալվաթ-խանէն (առանձնասենեակ, կամ առանձնատուն), որտեղ մտաւ նա: Ես էլ ներս մտայ. նա հրաւիրեց ինձ նստել:

ԳԼ. ԺԹ.

Հաջի Բարան մտնում է Շահի հաքիմ բաշու ծառայութեան մէջ:

Քիչ մտածելուց յետոյ հաքիմ բաշին ասաց.

— Ասքէր բանաստեղծը քո մասին շատ նպաստաւոր խօսքեր է խօսել ինձ. նա ինձ հաւաստիացրել է, որ քեզ կարելի է վստահել իբրեւ մի խոնարհ եւ հաւատարիմ անձի: Նա ինձ

ասել է նաև, որ դու շատ բաներ ես տեսել աշխարհում և այն-
քան շրջահայեաց, խոհեմ ու գաղտնապահ ես, որ ես ամենայն
վստահութեամբ կարող կը լինեմ քեզ յանձնել իմ առանձին
գործերի կատարումն։

Մինչդեռ նա այսպէս խօսում էր, ես ամբողջ ժամանակը
գլուխ էի տալիս նրան և աշխատում էի ձեռքերս միշտ ծնկնե-
րիս վրայ դրած պահել իրբն նշան խոհարհութեան։

Նա շարունակեց ասելով.

— Այս բոլորն քեզ պէս մի մարդու կարիքն ունեմ, և ու-
րովհետեւ ես բոլորովին վստահ եմ որ իմ բարեկամ Ասքէր խա-
նը երբէք չի խաբել ինձ քեզ ինձ յանձնարարելու գործի մէջ,
ուրեմն ես ուրախութեամբ մի պաշտօն կը յանձնեմ քեզ, և ե-
թէ դու կը կատարես այնպէս՝ ինչպէս ես եմ ցանկանում, այն
ժամանակ վստահ եղիր որ գործդ շատ լաւ կը լինի։

Ինձ աւելի մօտ հրաւիրելով և այս ու այն կողմը նայե-
լով՝ գլուխը մօտեցրեց իմիս և ասաց շատ ցած ձայնով.

— Հնչի, վերջերս ֆռանգները կողմից մի դեսպան է եկել
Թէհրան. նրա հետ եկել է և՛ մի հաքիմ։ Այս անօրէն հաքիմը
արդէն մեծ անուն ու պատիւ է՝ վայելում Թէհրանում։ Նա
բժշկում է իր հիւանդներին մի՛ ձեռով, որ միանգամայն նոր է
մեզ համար։ Նա մի մեծ սնդուկ դեղեր ունի, որոնց անուն-
ներն անգամ մենք չգիտենք։ Նա այնպիսի գիտութիւնների ա-
նուններ է տալիս, որ մենք Պարսկաստանում երբէք չենք լսել։
Նա երբէք տարբերութիւն չէ դնում տաք և պաղ հիւանդու-
թիւնների կամ դեղերի մէջ։ Նա իր հիւանդներին սնդիկ է խը-
մացնում որպէս զովացուցիչ դեղ։ Մի սուր գործիքով էլ մարդ-
կանց փորերն է պատռում և նրանց միջից քամի և ջուր հա-
նում։ Նա մինչև անգամ ասում է որ ինքն այնպէս մի բան է
կարող անել, որ երեսնանկը ծաղիկ չհաննի։ Նա մարդու մար-
մինը ծակում է և նրա մէջ ածում կովից առնուած մի ինչ որ
նիւթ, որ վերջերս իրանց փիլիսոփաների մէկը հնարել է։ Այս
ծաղկի խնդիրը շատ մտաւորանքութիւն է պատճառում մեզ, ու-
րովհետ մինչև այսօր այդ հիւանդութիւնը մեզ համար մեծ
եկամուտի աղբիւր է եղել։ Ծիշդն ասած, մենք թոյլ չենք
տալ որ այդ անօրէնը մեր հացը խլէ կամ կտրէ մեր բե-
րանից։

«Ինչևիցէ, շարունակեց նա, ես հիմայ պիտի ասեմ քեզ
թէ քո ծառայութիւնը գլխաւորապէս ինչ գործի համար եմ
ուզում։ Երկու օր սրանից առաջ մեծ վէզիրն այնքան քա-
ցախի ու շաքարի մէջ թաթախուած վարունդ ու հազար կե-
րաւ որ հիւանդացաւ։ Երբ այդ անօրէն ֆռանգների դես-

պանը լսեց նրա հիւանդութեան լուրը, անմիջապէս ուղարկեց իր հաքիմին նրան բժշկելու։ Անօրէն հաքիմը իսկոյն մատակարարեց մի ճար, որ միայն մէկ անհամ, ըսպիտակ դեղհատ էր։ Իմ կոյր բախտից այդ դեղհատը հրաշք գործեց։ Մեծ վէզիրն այնպէս շուտ առողջացաւ և այնքան առողջացաւ, որ իր ծեր հասակում նա այնպէս ծիծաղում, խօսում, զուարճանում և կանանց հետ բէֆ է անում որ մարդ զարմանում է։ Այս ֆուանգ հաքիմի և իր դեղի համբաւը տարածուել է ամբողջ Թէհրանում։ Շահն էլ այս առաւօտս վէլամի ժամանակ ամենից առաջ սքանչանալով խօսեց ֆուանգ հաքիմի գիտութեան և նրա տուած դեղի հրաշագործութեան մասին։ Յետոյ Նորին Մեծութիւնը հրամայեց ինձ բացատրել իրան թէ, ինչիցն էր որ այդպիսի մի փոքրիկ պատճառ (դեղ) այդքան մեծ հետեանքներ (օգուտներ) ունէր։ Խոնարհուելով նրա առջև և համբուրելով գետինը որպէսզի ոչ ոք չնկատէր իմ շփոթութիւնը, ես պատասխանեցի.

— Դուրբան լինիմ արքայից արքայի ոտներին, ես դեռ չեմ տեսել այն դեղը, որ ֆուանգ հաքիմը տուել է վեհափառութեանը մեծ վէզիրին. բայց խոստանում եմ որ երբ տեսնեմ այդ դեղը՝ քննեմ և շուտով յայտնեմ թէ նա ինչից է բաղադրուած։ Միևնոյն ժամանակ վեհափառութեանը ստորուկը հայցում է տիեզերքի կենտրոնիցդ թոյլտուութիւն աղաչելու որ ֆուանգ հաքիմի գլխաւոր գործակատարը չար ոգին է, որ թշնամի է մեր ճշմարիտ հաւատին, քանի որ նա գործիք է մի անօրինի ձեռքում—մի անօրէն՝ որ մեր սուրբ Մարգարէին խաբեւայ է անուանում և երբէք չէ հաւատում նախախնամութեան ամենակարող վճռին։

«Ես, շարունակեց հաքիմ բաշին, կամաւ այսպէս խօսեցի ֆուանգ բժշկի մասին, որպէսզի նրան վարկարեկ անէի Շահի և պալատականների առջև։ Ես դուրս եկայ պալատից և մինչև այս րոպէս մտքով տանջուում եմ և ամբողջ ժամանակը ճիգ ու ջանք եմ թափում մի հնար գտնելու, որով կարողանամ թափանցել այդ անօրինի գաղտնիքների մէջ և իմանալ թէ, ինչից է բաղադրուած նրա դեղհատը որ հրաշք է գործում։ Այժմ անչափ ուրախ եմ որ քեզ պէս մի մարդ այսպիսի մի պատեհ ժամանակում օգնութեան է հասնում ինձ։

«Իմ ցանկութիւնն է, աւելացրեց հաքիմ բաշին, որ դու շուտով ծանօթուես այդ անօրինի հետ, և ես թողնում եմ քո խոհեմութեանն ու հնարագիտութեանն որ որդի պէս մտնես նրա ուղեղի մէջ և ծծես նրա բոլոր գիտութիւնը։ Ճանկանում եմ նաև ունենալ մի հատ ճիշտ այն դեղհատից, որով նա բը-

ժշկեց մեծ վէզիրին, որովհետեւ խոստացել եմ վաղն այդ դեղ-հատի մասին բացատրութիւններ տալ Շահին: Որպէսզի քեզ յաջողուի ձեռք բերել մէկ կամ երկու հատ այդ դեղհատից, իմ կարծիքով, դու լաւ կ'անես որ հէնց այժմեանից սկսես այնքան վարուեալ ու հազար ուտել, որ ճիշտ մեծ վէզիրի պէս հիւանդանաս: Յետոյ կը գնաս այդ անօրէն հաքիմի մօտ, և երբ նա կը տեսնէ որ դու էլ ճիշտ վէզիրի պէս հիւանդ ես, անտարակոյս նոյն դեղիցն էլ քեզ կը տայ, և դու կը բերես կը տաս ինձ, և ես...»

Հաքիմ բաշու այս բոլոր խօսքերը ուշադրութեամբ աւանջ դրի. սակայն նրա վերջին առաջարկութիւնը կամ աւելի լաւ ասած՝ հրահանգը որ միանգամայն տարօրինակ թւաց ինձ, սարսափ ազդեց ինձ վրայ, և ես ընդհատելով նրան, ասացի.

— Բայց ես ի՞նչպէս ներկայանամ մի մարդու որին ես երբէք չեմ ճանաչում: Այնպիսի զարմանալի բաներ են պատմում այդ ֆռանդները մասին, որ ես չեմ հասկանում թէ ի՞նչպէս պիտի վարուել նրանց հետ: Դուք լաւ կ'անէք որ գոնէ մի քանի հրահանգներ տաք ինձ այդ մասին:

— Ֆռանդների վարքերն ու բարքերը բոլորովին տարբեր են մերիններից, ասաց հաքիմ բաշին: Դու կարող կը լինես մի գաղափար կազմել նրանց մասին, երբ ես ասեմ որ՝ հակառակ մեր սովորութեան՝ նրանք սափրում են իրանց երեսը և մազ են պահում իրանց գլխի վրայ: Մազի նշոյլ չես տեսնիլ նրանց երեսի վրայ, բացի բեղերից: Նրանց գլխի մազը այնքան խիտ է, որ մարդ կարծում է թէ նրանք երդուել են ամենեւին չխուզել նրանց: Նրանք նստում են փոքրիկ ամբիոնների (աթոռներ) վրայ, իսկ մենք նստում ենք գետնի վրայ: Նրանք կերակուր են ուտում երկաթէ ճանկերով (պատառաքաղով), իսկ մենք՝ մեր մատներով: Նրանք միշտ այստեղ ու այնտեղ են գընում, բայց մենք՝ շարունակ նստած ենք մնում: Նրանց զգեստը պինդ կպած է իրանց մարմնից, բայց մերը՝ բոլորովին արձակ է: Նրանք գրում են ձախ կողմից դէպի աջ, իսկ մենք՝ աջից դէպի ձախ: Նրանք երբէք չեն աղօթում, մինչդեռ մենք օրեկան հինգ անգամ ենք աղօթում: Վերջապէս, էլ ի՞նչ ասեմ, երկար ժամանակ է հարկաւոր որ նրանց մասին ամեն բան պատմեմ. բայց այսքանը պարզ է, և ամեն մարդ գիտէ որ այդ ֆռանդներն ամենակեղտոտ և ամենապիղծ մարդիկն են որ ապրում են այս աշխարհում: Նրանք չեն զարկում կամ անմաքուր չեն համարում: Նրանք ուտում են ամեն տեսակ կենդանիներ, սկսած խոզից՝ մինչև կրիան, և այն էլ «առանց կրտրելու նրանց կոկորդիսները»: Նրանք կտրատում են մեռած

մարդու մարմինը և կատարում են նրա վրայ այն՝ ինչ որ մի գազան կարող է անել, և այդ գազիւր ու պիղծ գործողութիւններից յետոյ բաղնիք չեն գնում իրանց մարմինը մաքրելու։

— Բայց մի բան միտքս ընկաւ, ասացի ես, ճշմարիտ է որ ասում են թէ ֆուսններն այնքան դիւրագրգիւ, զայրացելոտ ու անողորեքի են, որ եթէ մէկը համարձակուի նրանց ստախօս անուանել կամ նրանց խօսքերին կասկածել, նրանք կը կատաղեն և կը կռեն իրանց վիրաւորողի հետ, մինչև որ նրան կը սպանեն կամ իրանք կը սպանուեն։

— Այո, այո, այդ բոլորովին ճշմարիտ է, պատասխանեց Միրզա Ահմադ հաքիմ բաշին։ Բայց դեռ այդպիսի մի դէպք չէ պատահել ինձ։ Ինչևէ, մէկ բանի դէմ քեզ պիտի զգուշացնեմ, այն է՝ եթէ, ի դէպ, նրանք հաւանեն որևէ մի բան որ դու ունես, դու չպէտք է, ըստ մեր սովորութեան, նրանց ասես, «փէշքաշ ձեզ, այս ձերն է, իմս չէ», մի գուցէ նրանք քո խօսքին հաւատան, և դու զրկուես քո ունեցածից։ Նրանց հետ խօսակցելիս դու պէտք է աշխատես խօսել այն՝ ինչ որ իսկապէս մտածում ես, այսինքն՝ սուտ չխօսես, որովհետև նրանք շատ ճշմարտախօս են և սիրում են որ իրանց խօսակիցն էլ նոյնը լինի։

— Ուրեմն եթէ այդպէս է, ասացի ես, չէ՞ք կարծում որ ֆուսնը հաքիմը շուտով կարող կը լինի իմ սուտը բռնել, երբ ես նրա մօտ ինձ հիւանդ ձևացնեմ ու դեղ ուղիւմ նրանից, այն էլ ոչ թէ ինձ համար, այլ ուրիշի։

— Ո՛չ, ոչ, դու հէնց իրօք պէտք է հիւանդանաս, որպէս զի սուտ չլինի։ Գնա, հաջի, բարեկամս, ասաց նա, ձեռքը ձը գելով վզիս շուրջը, գնա և անմիջապէս այնքան վարունդ կ'են, հազար կ'են, որ շուտ հիւանդանաս, այնպէս որ մինչև իրիկ-նապահ ուղեցածս դեղհատն ինձ համար բերես։

Յետոյ շողորորթելով ինձ և թոյլ չտալով որևէ առարկութիւն անել՝ նա մեղմութեամբ գուրս հրեց ինձ իր սենեակից, և ես հեռացայ, չիմանալով արդեօք ծիծաղեմ թէ լամ այս իմ նոր դրութեան վրայ։ Ես չէի կարող համաձայնել առանց վարձատրութեան հիւանդանալ, ուստի վարձատրութեան խնդիրը կարգադրելու համար ես ետ դարձայ Միրզա Ահմադի սենեակը, բայց նա արդէն գնացել էր հարեմը։ Իզուր կը լինէր սպասել մինչև նա նորից դուրս գար, ուստի հեռացայ նրա տնից, ապագայ յաջողութեան յուսով, կատարելու նրա պատուէրը։

ԳԼ. Ի.

Հաջի Բաբան խարում է ֆռանդների դեսպանին եւ բժշկին:

Քայլերս ուղղեցի դէպի ֆռանդների դեսպանատունը:

Ճանապարհին մտածեցի հաքիմ բաշու պատուիրանի համաձայն ինձ հիւանդացնել, բայց այս էլ մտածեցի որ վարունգն ու հազարը, որ մեծ վէզիրի պէս մի ծեր մարդու այդքան վշտեւ էր, գուցէ երբէք էլ չՎնասէր ինձ:

Ինչէն, ես վճռեցի մի հնարք գտնել ֆռանդ հաքիմից Միրզա Ահմադի ուզեցած դեղհատը ձեռք բերել:

Մտածելով որ, եթէ ես ինձ հիւանդ ձեռնցնէի, ֆռանդ հաքիմը շատ հաւանականօրէն սուտս կը բռնէր և դուրս կ'անէր ինձ իր տնից իբրեւ մի խաբեբայի, ուստի աւելի բարւոք համարեցի ինձ ձեռնցնել իբրեւ արքունական հարէմի մի ծառայ և մի սուտ հնարելով՝ համնէի նպատակիս:

Այս դիտաւորութեամբ ես գնացի մի հին հանդերձավաճառի խանութ և վարձեցի այնպիսի մի վերարկու, որպիսին հագնում են պարսիկ մոնշիները (գրազիրները): Ապա, մի թերթ թուղթ գնեցի և պարսկական ձևի համեմատ փաթաթելով՝ զետեղեցի դատու մէջ որպէսզի աւելի քան մի հասարակ մարդ երևայի: Յիշելով այն բոլորը որ հաքիմ բաշին ասել էր ֆռանդների մասին, ես մօտեցայ դեսպանատունը: Այն պողոտան, որ տանում էր դէպի ֆռանդ հաքիմի տունը, խոնուած էր բազմաթիւ խեղճ կանանցից, իւրաքանչիւրի գրկում մի երեխայ, որոնք եկել էին հաքիմ սահրբից ստանալու ծաղիկ հիւանդութեան նորագիւտ դարմանը: Ֆռանդները ձրիապէս օգնում էին աղքատներին զանազան քաղաքական շահերի դիտումներով, և որովհետեւ ֆռանդ հաքիմը փող չէր ստանում, այդ պատճառով հիւանդները միշտ անպակաս էին լինում նրա մօտ, մասնաւորապէս աղքատ դասակարգից, որոնք չէին կարող մերձենալ մի պարսիկ հաքիմի առանց փող կամ փէշքէշ տալու նրան:

Ներս մտնելով հաքիմի տունը, կանգնեցի մի սենեակի առաջ, որտեղ նստած էր մի մարդ: Նա գետնի վրայ չէր նստած, այլ մի փոքրիկ ամբիոնի: Նրա մօտ դրուած էր մի աւելի բարձր ու լայն ամբիոն, որի վրայ կային արևղիկներ, գրքեր և զանազան տեսակ գործիքներ ու անօթներ, որոնց նմանը ես երբէք չէի տեսել և չգիտէի թէ ինչ բանի համար էին:

Նստացողն իր հագուստով և արտաքինով մի արտաքոյ կարգի անհաւատ էր որի նմանը երբէք չէի տեսել կեանքումս: Նրա երեսի վրայ երբէք մազ չկար, կարծես թէ նա կատարեալ մի ներքինի էր: Նա անամօթաբար գլխաբաց էր նստել: Նրա վզի շուրջը կար մի լայն փաթեթ *), որի տակից բարձրանում էր մինչև այտերը մի փողպատ, որով կարծես թէ նա ծածկել էր մի վէրք որ կրում էր վզի վրայ:

Նրա շորերն այնպէս պինդ կպած էին իր մարմինն որ կարծես թէ իր երկրում զգեստացուի սով կար: Նրա զգեստի ստորին մասը շատ անշնորհք մի բան էր: Սենեակում նա կօշիկներով էր ման գալիս, առանց մտածելու որ նա փչացնում էր գորգերը: Այս վերջինը շատ անվայելուչ և անքաղաքավարի մի սովորութիւն էր:

Նա խօսում էր մեր լեզուով, որովհետև ինձ տեսնելուն պէս իմ քէֆ ու անվալն հարցրեց: Ես հարկ համարեցի գործ դնել իմ բոլոր ճարտարութիւնը շողորորթելով և ասելով նըրան, որ ինքն արդէն մեծ համբաւ էր վայելում ամբողջ Պարսկաստանում: Աշխատեցի հաւատացնել նրան որ Լոդմանը, իր հետ համեմատած՝ մի յիմար արարած էր համարում, և թէ իր ժամանակակից պարսիկ հաքիմները արժանի չէին իր աշակերտները համարուելու:

Այս բոլորին նա ոչինչ չպատասխանեց:

Յետոյ ես ասացի.

— Գիտէ՞ք, հաքիմ սահիր, Շահը լսելով ձեր հրաշագործ դեղի մասին, հրամայել է իր պատմաբանին արձանագրել իր մեծ վէզիբի հիւանդութեան և բժշկութեան հանգամանքը՝ որպէս իր շահնշահութեան ժամանակում պատահած մի շատ արտաքոյ կարգի դէպք: Ձեր այդ դեղը Շահի կանանոցում այնպիսի զգացումներ է յարուցել, որ կանանցից շատերը հիւանդացել են և անհամբեր են իրանց վրայ փորձելու ձեր հանճարն ու վարպետութիւնը: Շահի ամենասիրելի վրացուհին այս բոլորիս սաստիկ հիւանդ է, և նորին վեհափառութեան հրամանով՝ հարէմի աւագ ներքինին ինձ պատուիրել էր ձեռք բերել հէնց նոյն դեղհատիցը, որ դուք տուել էք մեծ վէզիբին: Ուստի խնդրում եմ որ բարեհաճիք մի-երկու հատ շնորհել այդ դեղհատից:

Հաքիմ սահիրը մի բոլոր խոր մտածելուց յետոյ ասաց.

— Ես սովորութիւն չունեմ դեղ տալ որևէ հիւանդի առանց անձամբ տեսնելու նրան. սակայն եթէ դու զիտես որ

*) Վզկապ է նշանակում:

ասածդ վրացուհին կարիք է զգում իմ օգնութեանը, ես ուրախութեամբ կը դամ նրան տեսնելու և այնուհետև դեղ կը տամ:

— Թոյլ տուէք ինձ աղաչել, ասացի ես, որ անհնարին բան է որ դուք կարողանաք տեսնել հիւանդին, որովհետև Պարսկաստանում ոչ ոք ազատ չէ որեւէ մի կնոջ երեսը տեսնելու, քացի նրա ամուսնուց: Ծայրայեղ դէպքում գուցէ մի հաքիմի թոյլ տրուի շօշափել մի կնոջ զարկերակը, բայց այդ էլ այն ժամանակ կը լինի երբ նրա ձեռքը ծածկուած կը լինի: Հաքիմ սահիրը զարմանքով ասաց.

— Այդ ի՞նչ տարօրինակ բան է: Հիւանդի վիճակը լաւ ստուգելու համար ես ոչ միայն պիտի շօշափեմ նրա զարկերակը, այլև պիտի անպատճառ տեսնեմ նրա լեզուն:

— Հիւանդի լեզունն նայելը բոլորովին մի նոր բան է Պարսկաստանում, և ես վստահ եմ որ ձեզ չեն թոյլ տալ որ այդպէս բան անէք, միայն թէ մի առանձին արտօնութիւն լինի Շահի կողմից:

— Շատ լաւ, ասաց հաքիմ սահիրը, ես կը տամ քեզ մի դեղ, բայց իմացիր որ նրա հետեանքի համար ես պատասխանատու չեմ, որովհետև եթէ տուած դեղը չառողջացնի, գուցէ կը սպանի հիւանդին:

Պատասխանատուութիւնն ինձ վրայ դնելով, նա բացաւ մի մեծ անդուկ, որ լի էր դեղերով, և նրա միջից վերցնելով մի փոքրիկ տուփ որ լի էր մի տեսակ սպիտակ փոշիով, նա խառնեց այդ փոշուց մի կտոր հացի հետ, կլորեց իր մատներով և մի կտոր թղթի մէջ դնելով՝ տուեց ինձ և ասաց թէ ինչ ձևով և ինչ ժամանակ պէտք էր գործածել այն:

Նկատելով որ նա երբէք զաղտնի չէր պահում իր գիտութիւնը, ես սկսեցի հետաքրքիր լինել իր տուած դեղի յատկութեան մասին: Նա ոչինչ չվերապահեց ինձանից, ամեն բան յայտնեց ինձ: Նա երբէք չվարուեց պարսիկ հաքիմների պէս, որոնք մի փոքրիկ բանը մեծ բան են համարում:

Նպատակիս հասած լինելով՝ ես մեծ գոհունակութեամբ մնաք բարով ասացի հաքիմ սահիրին և վերադարձայ Միրզա Ահմադի մօտ, որ անհամբեր սպասում էր ինձ: Նրա սենեակը մտնելուց առաջ ես հանեցի իմ վարձած վերարկուն, և ներկայացայ նրան այնպիսի կեղծած դէմքով, որ նա կարծեց թէ ես այնքան վարուեմ ու հազար էի կերել, որ մեռնելու վրայ էի: Ամեն մի բառ խօսելիս ես այնպէս ծամածռութիւններ էի անում, այնպէս կծկւում էի ամբողջ մարմնով որ տեսնողը պիտի կարծէր թէ փորս տրաքւում էր սաստիկ ցաւից: Մի խօս-

քով այնպէս կատարեալ դերասանութիւն արի, որ հաքիմ բաշին իր խստասրտութեամբ խղճաց ինձ:

— Բիսմիլլահ, ստացէք ձեր ուզածը, ասացի ես և դարձեալ սկսեցի սոսկալի ծամածուծութիւններ անել և խոր հառաչանքներ արձակել: Ահա ես կատարել եմ ձեր պատուէրը և սպասում եմ ձեզանից վարձատրութիւն ստանալու: Նա ուզեց ձեռքիցս առնել դեղհատը, սակայն ես պինդ պահեցի. անմիջական վարձատրութիւն պահանջելով նրանից: Ես ցոյցերով հասկացրի նրան որ եթէ իսկոյն մի բան չտար ինձ, ես կուլ կը տայի դեղհատը: Ծարահատուած՝ նա մի ոսկի տուեց ինձ: Ես ուզում էի շարունակել իմ կեղծեալ փորացաւը և դեռ նրան չյանձնել դեղհատը, սակայն երբ տեսայ որ նա պատրաստում էր մի մեծ քանակութեամբ բաղադրութիւն խմացնելու ինձ իբրեւ փորացաւի դեղ, ես իսկոյն փոխեցի դիտաւորութիւնս և այնպէս ձեռքերի որպէս թէ փորացաւս յանկարծ դադարեց, և դեղհատը տուի իրան:

Նա իսկոյն սկսեց դեղհատի վերլուծութեան գործը. այս ձեռքից միւս ձեռքի մէջ դրեց, մօտեցրեց աչքերին, պահեց լոյսի դէմ, հոտ քաշեց, դարձեալ միւս ձեռքի ափի վրայ դրեց և ուշադրութեամբ նայեց, սակայն չհինչ չհասկացաւ: Ես ասացի, որ հաքիմ սահիրը ինձ ասել էր, որ նրա մէջ սնդիկ կայ:

— Մնդիկ, այո՛, ես գիտեմ այդ: Այդ անօրէնը, այդ պղծ իսաւին (քրիստոնեայ) մտածել է թունաւորել մեզ սնդիկով, և նա կարծում է որ կարող է ոչնչացնել ինձ, ինձ՝ որ այնպէս դեղատոմսեր եմ գրում որ հայրն էլ երազում չէ տեսել: Մնդիկը պաղ է. վարունգն ու հազարն էլ պաղ են. սառուցով կարելի՞ է սառոյց հալել: Երևում է որ այդ աւանակը դեռ բըժշկութեան ամենատարրական բաներիցն էլ տեղեակ չէ: Ո՛չ, հնչի, մենք չպիտի թոյլ տանք որ նա ծիծաղի մեր մօրութենքի վրայ:

Մինչդեռ հաքիմ բաշին այսպէս խօսում էր, մի ծառայ ներս մտաւ և յայտնեց որ Շահը սպասում էր իրան: Նա անմիջապէս փոխեց իր զգեստը, հրամայեց շուտ պատրաստել իր ձին և վերցնելով դեղհատը՝ վախով ու կասկածով դուրս գնաց անից, հեծաւ ձին և շտապեց դէպի պալատը:

ԳԼ. ԻԱ.

Հաջի Բարան նկարագրում է թէ պարսից Շահն ինչպէս է դեղ ընդունում:

Շահի մօտից վերադառնալով, հաքիմ բաշին ուղարկեց իմ հօտերց: Երբ ես նրա մօտ գնացի, նա սաստիկ յուզուած էր: Հրամայելով որ սենեակի մէջ գտնուողները դուրս գնան, նա ինձ ասաց.

— Մօտեցիր, հաշի, թող ականջիդ ասեմ որ մենք պիտի պատրաստուենք այդ անօրէն ֆոանգ հաքիմի կեանքին վերջ տալ: Գիտի՞ս ինչ է պատահել: Այս առաւօտ Շահը առանձին խորհրդակցութիւն է ունեցել նրա հետ, և երևի շատ բաներ են խօսել միմիանց հետ, այն էլ առանց իմ գիտութեան: Շահի խօսքերից ես այսօր լաւ հասկացայ որ այդ անհաւատ ֆոանգը ուղղակի մօտ է նրա սրտի մէջ և մեծ ազդեցութիւն ունի նրա վրայ: Նա՛ Շահը պատմել է նրան իր հիւանդութեան մասին, և երեք օր ժամանակ է տուել մտածելու և միւս ֆոանգ հաքիմներին հետ խորհրդակցելով բաղադրելու մի դեղ որ կարողանայ բոլորովին վերականգնել իր քայքայուած առողջութիւնը: Նա իմ կարծիքն հարցրեց ֆոանգների բնաւորութեան, յատկութիւնների և նրանց դեղերի մասին: Նա մինչև անգամ հրամայեց ինձ բացարձակ կերպով յայտնել իմ կարծիքը: Այս շատ լաւ առիթ էր: Ես իմ սովորական նախաբանով աղաչեցի նրան որ ֆոանգները մի կեղծ ու անհաւատ ազգ են, որ մեր մեծ Մարգարէին խաբեբայ են անուանում, որ խողի միս են ուտում, գինի են խմում, որ դէմքով նրանք կանանց են նմանում և վարքով՝ արջերի. որ նրանք շատ կասկածելի մարդիկ են և ամեն գործի մէջ նրանք յետին մտքեր ունին, ինչպէս, օրինակի համար, նրանք տիրեցին Հնդկաստանը և այնտեղի բոլոր թագաւորներին ու նաւաբներին այնպէս ճնշեցին որ նրանց իրանց խոնարհ ժառանգները դարձրին: Գալով նրանց դեղերին, ասացի ես, Ալլահն պաշտպանէ ձեզ նրանցից. նրանց գեղերը այնքան խարդախ են ներգործութեան մէջ, որքան իրանք խաբեբայ են քաղաքականութեան մէջ: Այն դեղը որ ուղղակի մահ է պատճառում, նրանք նրանով կեղծում են իբր թէ հիւանդին կարող են առողջացնել: Նրանց գլխաւոր բաղադրութիւնների գլխաւոր մասը սնդիկն է, և նրանք գործ են ածում զանազանակերպ սուր գործիքներ ու դանակներ, որոնցով շատ անգամ կտրում են մարդկանց սրունքները նրանց կեանքը փրկելու համար: Վերջապէս ես այնքան հակառակ բաներ

պատմեցի Շահին, որ նա խոստացաւ ինձ որ երբ ֆռանգ հա-
քիմը կը պատրաստէ իր ուզած դեղը և կը բերէ, նա ինձ
իր մօտ կը կանչէ տեսակցութեամբ անօրինի հետ և խորհրդակ-
ցելու նրա պատրաստած դեղի մասին:

«Այժմ, հաջի, շարունակեց հաքիմ բաշին, ես չպէտք է
թոյլ տամ որ Շահը մինչև անգամ մատը դնէ այդ անօրինի
տուած դեղի վրայ. որովհետեւ եթէ այդ դեղը նրան առողջա-
ցնի, իմ բանը շատ վատ կը լինի: Մի խօսքով, ես անքան
վարկաբեկ կը լինիմ որ մի սև փողի արժէք էլ չեմ ունենալ
Շահի մօտ: Ո՛հ, հաջի, կրկնում եմ, մենք չպիտի թոյլ տանք
որ Շահը գործածէ նրա դեղը. այո, ես թոյլ չեմ տայ:

Մենք փոխադարձ խոստումներով վճռեցինք ամեն ջանք
գործ դնել ոչնչացնելու անհաւատ հաքիմ սահիրին:

Երեք օրից յետոյ Շահը կանչեց Միրզա Ահմադին քննե-
լու հաքիմ սահիրի տուած դեղը, որ դեղհատներ էին: Նա՛ հա-
քիմ բաշին, իհարկէ յարուցեց ամեն տեսակ կասկածներ այդ
դեղհատների դէմ և ցոյց տուեց թէ ճիշդն վտանգաւոր էր
Շահի համար ընդունել մի օտար պետութեան գործակալի
տուած դեղ, և համոզեց Շահին այդ խնդրի մասին խորհրդակ-
ցել նախարարների հետ:

Միւս օրը պալատականների ժողովում Շահը խօսեց
ֆռանգ հաքիմի, նրա դեղի, հաքիմ Ահմադի՝ ֆռանգների մասին
յայտնած կարծիքների վերաբերութեամբ, և առաջարկեց ժողո-
վին որ իւրաքանչիւր մէկը մի հատ այդ դեղհատներից կուլ տայ,
որպէսզի բոլորին էլ յայտնուի թէ՛ նրանք ինչ յատկութիւն
կամ զօրութիւն ունին:

Շահի՛ այս առաջարկի վրայ պալատականներն ասացին.

— Յաւիտեան ապրի տիեզերքի կենտրոնը, նրա ստուերը
միշտ մեր վրայ լինի, մենք ոչ միայն կուլ կը տանք դեղհատները,
այլև պատրաստ ենք մեր կեանքերը զոհելու նրա համար: Մենք
բոլորս էլ վեհափառութեանդ ստրուկներն ենք, և զուրբան կը
լինենք ձեր ոտների տակին: Ալլահն առողջութիւն տայ արքա-
յից արքային որ միշտ յաղթող լինի իր թշնամիներին:

Շահը հրամայեց Միրզա Ահմադին դեղհատները տուփը
հրամցնել ժողովականներին, որոնք մի-մի հատ վերցնելով
կուլ տուին: Նա յետոյ սկսեց ուշադրութեամբ նայել նրանց ե-
րեսին, տեսնելու թէ ինչ փոփոխութիւն էր առաջ գալիս նը-
րանց վրայ:

Մի փոքր ժամանակից յետոյ դեղհատներն սկսեցին ցոյց
տալ իրանց զօրութիւնը: Արքունի գանձապետը, որ մինչև հի-
մայ լուռ ու անշարժ էր մնացել, միայն թէ Շահի ամեն մի խօս-